ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

14 օգոստոսի 2026թ. թիվ 905

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ա.ՄԱԼՈՅԱՆԻՆ ԵՎ Վ.ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ արտաքին գործերի նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 2026 թվականի օգոստոսի 10-ի № 1105/40852-26 գրությունը, ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուանի էներգետիկայի ցածր ածխածնային զարգացման համաժողովի կազմակերպչական կոմիտեի հրավերը և հաշվի առնելով Ա.Մալոյանի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Մալոյանին և ավագ մասնագետ Վարդուհի Ասլանյանին 2026թ. սեպտեմբերի 3-ից 7-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաքում կայանալիք «Կրկնակի ածխածնային նպատակների միջոցով էներգետիկ անցման առաջնորդում, նորարարությունների միջոցով կանաչ ապագայի արագացում» խորագրով համաժողովին:

2. Գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը կատարվելու է ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Ա.Թումանյանին, Ա.Մալոյանին և Վ.Ասլանյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո կատարած աշխատանքների վերաբերյալ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին ներկայացնել հաշվետվություն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին և ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

8/14/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր